Օրենսդրական նախագծային փաթեթի վերաբերյալ

Հանրային քննարկման է ներկայացվելու <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ սահմանադրական օրենքի, <<Կուսակցությունների մասին>> ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերը:

Օրենսդրական նախագծերի փաթեթով նախատեսվում է հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանել երկու տեսակի ընտրակարգեր հետևյալ սահմանազատումներով.
   - ✓ մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում ավագանու մեծամասնական կարգով ընտրություններ և համայնքի ղեկավարի ուղղակի կարգով մեծամասնական ընտրություններ.
   - ✓ 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքներում ավագանու համամասնական ընտրություններ, համայնքի ղեկավարի անուղղակի կարգով ընտրություններ (ավագանու կողմից՝ վերջինիս կազմից).

2. Առաջարկվում է համայնքների ավագանիների կազմը սահմանել հետևյալ կառուցվածքով՝

1) հինգ անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում.

2) յոթ անդամից՝ 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքում.

3) ինն անդամից՝ 2000-ից 4000 ընտրող ունեցող համայնքներում.

4) տասնհինգ անդամից՝ 4 000-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում. (գործող 9-ի և 11-ի փոխարեն)

5) քսանմեկ անդամից՝ 10 000-ից մինչև 25 000 ընտրող ունեցող համայնքում (գործող 15-ի փոխարեն)

6) երեսուներեք անդամից՝ 25 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում (գործող 15-ի փոխարեն, բացառությամբ Գյումրու և Վանաձորի, որտեղ ավագանու անդամների թիվը 33 է)

7) 65 անդամից՝ Երևան քաղաքում.

3. Նախատեսվում է ընտրական գրավի չափի փոփոխություններ, մասնավորապես՝ մեծամասնական ընտրության դեպքում՝ մինչև 500 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն չի վճարում ընտրական գրավ, 500-ից մինչև 1000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն վճարում է նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի, ավագանու անդամը՝ 10-ապատիկի, 1000-ից 4000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 100-ապատիկի, ավագանու անդամը՝ 15-ապատիկի չափով ընտրական գրավ (ըստ գործող օրենքի՝ մինչև 500 ընտրող ունեցող համայնքներում ևս չի նախատեսվում, 500-1000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն վճարում է նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի, ավագանու անդամը՝ 10-ապատիկի, 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 100-ապատիկի, ավագանու անդամը՝ 15-ապատիկի չափով ընտրական գրավի փոխարեն):

Ընտրական գրավը համամասնական ընտրակարգի դեպքում՝ Երևանի ավագանու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 3 000-ապատիկի չափով ընտրական գրավ, 25 000 և ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանիների դեպքում՝ 1 000-ապատիկի չափով ընտրական գրավ, 10000-ից 25 000 ընտրող ունեցող համայնքների ավագանիների դեպքում՝ 500-ապատիկի չափով, մինչև 10000 ընտրող ունեցող համայնքների ավագանիների դեպքում՝ 200-ապատիկի չափով ընտրական գրավ: (Գործող օրենքով՝ Երևանի ավագանու դեպքում սահմանված է նվազագույն աշխատավարձի 3 000-ապատիկի չափով ընտրական գրավ,Գյումրու և Վանաձորի ավագանիների դեպքում՝ 2 000-ապատիկի չափով ընտրական գրավ):

4. Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախնտրական հիմնադրամի դրույթները սահմանվել

են գործող մինչև 2000 ընտրող ունեցող համայնքների ղեկավարի և ավագանու անդամի համար սահմանված չափով:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում նախընտրական հիմնադրամի համար սահմանվում է. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հիմնադրամում կարող է (են) կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով մուծում, 25 000 և ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանիների ընտրություններում՝ մինչև նվազագույն աշխատավարձի 3 000-ապատիկի չափով մուծում, մինչև 25 000 ընտրող ունեցող համայնքների ավագանիների ընտրություններում՝ մինչև նվազագույն աշխատավարձի 2 000-ապատիկի չափով մուծում:(Գործող կարգավորումները մնացել են նույնը Երևանի ավագանու ընտրության դեպքում և 25000 և ավելի ընտրող ունեցող համայնքների դեպքում սահմանվել են Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրության համապատասխան կարգավորումները):

5. Նախատեսվում է մանդատների բաշխմանը մասնակցելու համար անցողիկ շեմը կուսակցությունների համար սահմանել 3 տոկոս գործող 6-ի փոխարեն, իսկ կուսակցությունների դաշինքի համար ՝ 5 տոկոս գործող 8-ի փոխարեն և եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 3 (5) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 4-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 4 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները (եթե ընտրությանը մասնակցել է 4 կուսակցություն(կուսակցությունների դաշինք)):

6. Նախատեսվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրության ժամանակ կուսակցությունների (դաշինքների) կողմից թեկնածուներ առաջադրելու իրավահարաբերություններին տարածել համամասնական ընտրակարգով ընտրվող բոլոր համայնքների ավագանիների ընտրության դեպքերի վրա:

Ըստ էության, տեղական ընտրություններում մասնակցության ցուցաբերման կուսակցական հետաքրքրվածությունը և շահագրգռվածությունը պայմանավորված են հենց այն փաստով, որ թեկնածությունների առաջադրումը վերջիններիս կողմից իրականացվի այն համայնքներում, որոնք որևէ կերպ օժտված են քաղաքական մրցակցային պայմաններ ունենալու առանձնահատկություններով, այդ թվում՝ համայնքի մեծությամբ, բնակչության և ընտրազանգվածի առավել մեծ թվաքանակով, դրանով պայմանավորված համայնքի կարողունակությամբ, այդ համայնքում քաղաքական պաշտոն զբաղեցնելու և այդ պաշտոնից բխող լիազորությունների և գործառույթների իրականացման արդյունքում քաղաքական պատասխանատվության բեռը կրելու հանգամանքով:

Միաժամանակ, չբացառելով մեծամասնական ընտրակարգով ավագանու անդամի և համայնքի ղեկավարի թեկնածության առաջադրման իրավական հնարավորությունը և անհրաժեշտությունը, նախագծային փաթեթով սահմանվել է համապատասխան կարգավորումներ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքների մասով: